ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԸՆՏՐՎԵՑ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԱՆԴԱՄ

31.07.2023 20:34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Այսօր՝ 31.07.2023 թվականին, ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հաշվիչ հանձնաժողովի հերթական նիստի ընթացքում տեղի ունեցած վիճակահանության միջոցով Պալատի կարգապահական հանձնաժողովի նոր անդամ ընտրվեց փաստաբան Գուրգեն Թորոսյանը:

Հիշեցնենք, որ Պալատի կանոնադրության 15.14 կետի համաձայն՝ «Վարկանիշային կարգով Փաստաբանների պալատի խորհրդի և Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների վերջին հորիզոնականըզբաղեցրած այն թեկնածուների ձայների հավասարության դեպքում, երբ հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած թեկնածուին, ապա վերջին հորիզոնականը զբաղեցրած հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն»:

Տվյալ պարագայում Փաստաբաններ Գուրգեն Թորոսյանը և Կարեն Խալաթյանը 24.12.2022 թվականին տեղի ունեցած ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքում՝ որպես հանձնաժողովի անդամի թեկնածու, ստացել էին հավասար 156(հարյուր հիսուն վեց) ձայն:

Հ.Գ. Կարգապահական հանձնաժողովի անդամ Հունան Բաբայանը 29.06.2023 թվականին դիմում էր ներկայացրել Պալատ, իր՝ որպես կարգապահական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամ դադարեցնելու մասին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })